ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 սեպտեմբերի 2017 թվականի N 118-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ 113-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՀԻԴԴԵՆ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 23-ի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման մասին թիվ 113-Ա հրամանում կատարել փոփոխություններ՝

1) 1-ին կետի 14-րդ տողում՝ «9.X=4468363 Y=8389170» կոորդինատը փոխարինել «9.X=4468363 Y=8389970» կոորդինատով,

2) 1-ին կետի վերջին տողում՝ «76.82 հա» թվերը և բառերը փոխարինել «69.2 հա» թվերով և բառերով:

2. Ընդերքի գործակալության պետին՝

սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն թիվ Լ-565 լեռնահատկացման ակտում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ